

ՎԵՐԺԻՆԵ ՍՎԱԶԼՅԱՆ. Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ. Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000, 500 էջ:

Բազմաթիվ տարիների ընթացքում ես հետևել եմ գոկտ. Վերժինե Սվազլյանի աշխատանքին և տպավորված եմ նրա գիտական լրջությունից և պատասխանատվությամբ: Նա գլխավորապես կենտրոնանում է բանահյուսության և հուշագրությունների վրա, որոնք հատկապես առնչվում են արևմտահայերին և ցեղասպանությանը:

Տարիներ առաջ, երբ ես ինտերվյուի Հայաստան այցելեցի, շեշտեցի, թե որքան կարևոր է Օսմանյան կայսրությունում ծնված վերջին հայ սերնդի բանահյուսությունը և նրա սյամական հիշողությունը հավաքելու գործը: Այդ ժամանակ իմ պնդումները քաղաքական և այլ պատճառներով արդյունք չտվեցին, և ես տխուր էի տեսնելով, թե ինչպես մի ամբողջ սերունդ անհետանում է առանց որևէ պատշաճ ուշադրություն դարձվելու նրա հուշագրություններին, նրա ժողովրդական բանահյուսությանը, նրա փորձություններին և աղետից հետո նրա ապրած կյանքին:

Եվ ահա 1955-ից Հայաստանում լուրջ ուշադրություն դարձվեց այս հարցին, ես դո՛հ եմ, որ Վերժինե Սվազլյանը խորը նվիրվածությամբ և ժրաջան աշխատանքով իր ջանքերն ուղղեց այս խնդրին՝ հրատարակելով «Մուսալեռ» բանահյուսական ժողովածուն (1984): 1990-ականների ընթացքում գոկտ. Ավազլյանը մեղ տվեց արևմտահայերի անհետացող կյանքի և հուշագրությունների վերաբերյալ շատ կարևոր ուսումնասիրություններ: Նրա «Կիլիկիա. Արևմտահայոց բանավոր ավանդությունը» (1994), հրատարակված Հայաստանի դիտությունների ազգային ակադեմիայի կողմից, հիմնված էր Կիլիկիայի շրջանի հայկական համայնքների բանավոր ավանդության և հուշագրությունների վրա: Դա մի սոցիոլոգիական, պատմաբանագիտական և մարդաբանական աշխատանք է:

Հաջորդ տարի գոկտ. Սվազլյանը հանդես եկավ Մեծ եղեռնի բանավոր պատմագրության մի հատորով, որը բովանդակում է Հայոց ցեղասպանության նկարագրությունը այդ ոճագործությանն ականատես վկաների բանավոր շարադրանքով: Նրա «Մեծ եղեռն. Արևմտահայոց բանավոր վկայություններ» (1995) աշխատությունը նախորդ ուսումնասիրության դարձացումն էր, որը ցույց է տալիս, թե որքան արժեքավոր կարող են լինել բանավոր պատմագրությունն ու ավանդապատումը և թե ինչպես դրանք կարող են օգտագործվել դիտականների ուսումնասիրություններում:

Չափազանց կարևոր է նրա «Մեծ եղեռնը արևմտահայոց հուշագրություններում և թուրքալեզու երդերում» (1997) փոքրածավալ, բայց արժեքավոր գիրքը: Նրանք, ովքեր մեծացել են վերապրողների սերնդի հետ, հիշում են այն տխուր թուրքալեզու երդերը, որոնք երգվում էին կանանց կողմից տարագրության ճամփաներին և դրանից հետո: Սրանք անչափ կարևոր են ոչ միայն որպես ապացույց այն ֆիզիկական և մտավոր զրկանքների, որոնց ենթարկվել են կանայք, այլ նաև նրանով, որ հավաստում և հիմնավորում են Հայոց ցեղասպանության այդ ծայրահեղ դժվար իրողությունը: Աքսորի թուրքալեզու երդերը չափազանց ուժեղ ներգործությամբ են օժտված և հրաշալի է, որ դրանք հավաքվել, թարգմանվել և հրատարակվել են ոչ միայն Հայերեն ու թուրքերեն, այլև՝ ռուսերեն (1997) ու անգլերեն (1999):

Դոկտ. Սվազլյանի վերջերս լույս ընծայած «Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ» (2000) նոր գիրքը, մեծապես տպավորիչ է: Այն մեզ գրավոր ձևով ներկայացնում է նախկին Օսմանյան կայսրության տարբեր բնակավայրերից, ինչպես նաև Մուսթաֆա Քեմալի ղեկավարած ազգայնական թուրքերի կողմից գրավված տարածքներից տեղահանված վերապրողների բանավոր վկայությունները: Ակնհայտ է, որ այս մարդկանցից քչերը երբևէ կմտածեին իրենք ձայնագրել իրենց հուշերը կամ գրի առնել իրենց տառապանքների նկարագրությունը: Կրկին անգամ հարկ է նշել, որ հարցազրույցի գործընթացն է, որ այդ հնարավոր է դարձրել: Հատորը ներառում է ոչ միայն գրառված հուշ-վկայություններ, այլ նաև կարևոր վիճակագրական տեղեկություններ, դասակարգումներ, հարցազրույցի ենթարկվածներից հավաքված երգեր, բանաստեղծություններ: Նյութը հավաքված է հիմնականում Հայաստանի, մասամբ Հունաստանի, Ֆրանսիայի, Թուրքիայի և ԱՄՆ-ի վերապրողներից, պարունակում է նաև որոշ վկայություններ վերապրողների զավակներից՝ ցույց տալով, թե ինչպես ցեղասպանության փորձությունները փոխանցվել են սերնդից սերունդ:

Մարդիկ, ովքեր մակերեսայնորեն կնայեն այս աշխատանքին, չեն կարող գիտակցել, թե ինչ ծավալի սիրո և նվիրումի աշխատանք է կատարվել: Բանահյուսությունը խիստ բծախնդիր գործընթաց է, և բազմաթիվ հարցազրույցների, ձայնագրությունների և տեսագրությունների բառացի վերծանումը բնագավառի խորը գիտելիքներ է պահանջում, ինչպես նաև մասնագիտական և վերլուծական մեծ հմտություն: Բարեբախտաբար Վերծինե Սվազլյանն ապացուցել է, որ ինքն ունի այդ անհրաժեշտ կարողությունները:

Դոկտ. Վերծինե Սվազլյանի աշխատանքն այս բնագավառում օգնում է փակելու մի հսկա դատարկություն Հայագիտության մեջ: Ես միայն ափսոսում եմ, որ մենք այսքան երկար ենք սպասել նման աշխատանքներ հրատարակելու համար, քանի որ փաստորեն արդեն կորցրել ենք վերապրողների սերունդը: Այդուհանդերձ, ես երախտապարտ եմ, որ մենք ունենք վերապրողների մնացորդացի այս արժեքավոր վկայությունները:

ՌԻՉԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (ԱՄՆ)